ԱՆԻ Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱԿՈԲ Դ. ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ ՕՐՎԱ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՇՈՒՐՋ

Հակոբ Դ. Ջուղայեցին Հայոց ամենաերեւելի հայրապետներից է, լուսավորչական-վերանորոգչական շարժման նախաձեռնողներից ու հայ ազատագրական շարժման ռահվիրաներից: Ժամանակակիցները նրան անվանել են, «Ճգնազգեաց դիտապետ»[1], «մաքրամիտ»[2], «այր սուրբ եւ բնտրեալ»[3], «յոյսն ամենեցուն»[4] ու «Մեծն Կաթողիկոսն Հայոց»[5]: Հետեւաբար, բնական պետք է համարել այն հսկայական հետաքրքրությունը, որ նրան է նվիրել հայ պատմաբանասիրական միտքը[6]: Այնուհանդերձ, խոստովանելի է, որ առկա բազմաթիվ ուսումնասիրություններ ի վիճակի չեն եղել հստակեցնել Հակոբ Ջուղայեցու կենսագրության առանձին փաստեր եւ, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Քյուրտյանը, Կաթողիկոսի վավերական կենսագրությունը շարունակում է մնալ «աղճատուած, այն խանգարված է իրականութենէն շատ ու շատ հեռու հեքիաթ վիպասանութիւններով»[7]: Հայոց Հայրապետի կենսագրության մեջ ամենախճճվածն ու առեղծվածայինը թերեւս մնում է նրա մահվան օրվա հարցը: Ե՞րբ է մահացել Հակոբ Դ. Ջուղայեցին: Թվում է, թե դա պետք է լիներ ամենահստակն ու ճշգրտվածը: Մանավանդ Կաթողիկոսի դամբարանը եզրափակող ու համապատասխան արձանագրությամբ օժտված տապանաքարի առկայության պայմաններում: Այն մարմարյա մեծածավալ շիրմա-

1 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Ա., Երեւան, 1984, , էջ 1104:

2 «Մանր ժամանակագրություններ». XIII-XVIII դդ., հատ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 357:

3 Անդ, էջ 361:

4 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Դ, Երեւան, 2008, էջ 684, հմմտ. անդ, հատ. Է, Երեւան, 2012, էջ 526:

5 Անդ, հատ. Բ., Երեւան, 2004, էջ 1049:

6 Մասնավորապես տե՛ս **Միքայէլ Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հատ. 3, Վենետիկ, 1786, էջ 647, 657-661, 691-692, 701-719; **Մ. Խոսրիկեան**, Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի. «Արարատ», 1902, դ 9-10, էջ 771-785; **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, հատ. Բ., Կ. Պոլիս, 1913, էջ 2910-3052; **Ա. Գ. Նովհաննիսյան**, Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը եւ գաճկահայ նվիրակության խնդիրը. «Արարատ», 1915, դ 2-3, էջ 195-205. նույնի՝ «Հակոբ Ջուղայեցու մի գրություն ռուս արքունիկին». «Արարատ», 1915, դ 9-10, էջ 775-781. նույնի՝ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք 2, Երեւան, 1959, էջ 202-223 եւ այլուր; **Յ. Քիւրտեան,** Նիւթեր Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի կենսագրութեան համար (1655-1680). «Հասկ», 1952, փետրվար, էջ 41-44, մարտ-ապրիլ, էջ 87-89. նույնի՝ «Հակոբ կաթողիկոս Ջուղայեցի», Անթիլիաս-Լիբանան, 1969. նույնի՝ «Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարեւոր վաւերաթուղթ մը». «Միռն», 1969, մարտ-ապրիլ, էջ 126-133; **Մ. Թերզեան,** Հակոբ Դ. Ջուղայեցի, Բեյրութ, 1965; **Լ. Ս. Խաչիկյան,** Հակոբ Ջուղայեցու կրակը. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, դ 4, էջ 173-186; **Կ. Ամատունի**, Յակոբ Դ. Ջուղայեցի. «Բազմավէպ», 1992, 1993, 1995:

7 Տե՛ս **Յ. Քիւրտեան,** Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարեւոր վաւերաթուղթ մը, էջ 127:

Հակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոս

քար է, որի վրա դրվագված են կաթողիկոսական թագ, եմիփորոն, գավազան, կոնքեռ եւ պապվանշաններ: Շիրմաքարն ունի 12 տողանոց երկաթագիր արձանագրություն՝ վեց տող շիրիմի աջ (հարավային), իսկ մյուս վեցը՝ ձախ (հյուսիսային) կողմում: Ինչպես հավաստում է շիրմաքարի արձանագրությունը, այն կառուցել է ժամանակի ամենահայտնի շինարար վարպետներից մեկը՝ Զաքարիա խալֆան[8]: Գերեզմանը շրջափակված է երկաթյա բարձրաճաշակ գեղազարդ ճաղաշարով, որ, անկասկած, ավելի ուշ շրջանի ստեղծագործություն է:

Հակոբ Ջուղայեցու տապանագիրը էական բացթողումներով առաջին անգամ հրատարակել է Վիեննական Մխիթարյան Ադ. Պալճյանը[9]: Հետագայում այն ընթերցել եւ հրատարակել են շատերը: Լավագույն ընթերցումը, անկասկած, պատկանում է Վ. Թորգոմյանին, որի համաձայն էլ ստորեւ ներկայացնում ենք այն:

Աջ երես՝

Հանգստարանս այս հրաշափառ եւ պատուելի
Վայելչադիր յօրինուածովք ի հանդիսի
Ունի աւանդ զմաքուր մարմին բազմերջանկի
Տեառն Յակոբայ Հայոց ընտրեալ Հայրապետի
Որ փոխանորդ Հօր մերոյ Սրբոյ Լուսաւորչի
Կաթողիկոս օծեալ նորին օրհնեալ գահի:

Ձախ երես՝

Եւ արդ տապանս բուժիչ ախտից մարմնականի
Յուսով ի սա դիմեցելոց հրաշիւք յայտնի
Ջկազմող սորին յիշել ի Տէր զարմիւք հայցի
զՋաքարիեայն որ ի խալիֆայ հիւսնականի
Հազար հարիւր քսան եւ ինն թըվի
Երկրորդ աւուր ամսոյն Հռոմայ օգոստոսի:

Այսինքն՝ 1680 թ. օգոստոսի 2-ին[10]:

Բայց հարցը սրանով չի սպառվում, գայթակղությունը առջեւում է: Շիրմաքարի աջ կողմի ներքեւի անկյունում առկա է երեք տողանոց մի արձանագրություն եւս, որտեղ դարձյալ հավաստում է Կաթողիկոսի մահվան թվականն ու օրը՝

Սբ Հօրս հանգ
ում յեղեր... Ռ.
ՃԻԹ. օգոստոսի Ա.:

---

8 Թերեւս սա նույն Զաքարիա խալֆան է, որ 1654 թ. Անկարայի Ս. Աստվածածին եւ 1671 թ. Քանդիեյի Ս. Կարապետ եկեղեցիներին Ավետարաններ է նվիրել (տե՛ս **Ն. Ա. Ստեփանյան,** Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2012, էջ 435):

9 **Ադ. Պալճեան,** Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս, Վիեննա, 1878, էջ 164-165:

10 **Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան**, Սրամպօլոյ պատմութիւն, հրատարակեց եւ ծանօթագրեց գօրթ. Վահրամ Յ. Թորգոմեան, հատ. Բ., Վիեննա, 1932, էջ 602; **Մ. Նանեսեան**, Հարիւրքսան եւ հնգամեայ հոբելեան Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1982, էջ 312-314:

Այսինքն՝ 1680 թ. օգոստոսի 1-ին[11]:

Անշուշտ փարօրինակ է, քանզի նույն փապանաքարի վրա, ինչպես տեսանք, կաթողիկոսի մահվան օրը հիշատակվում է երկու անգամ, երկու տարբերակով՝ «օգոստոսի 1 եւ 2»: Ո՞րն է սրանցից վավերականը եւ ի՞նչ է նշանակում նման հակադրությունը: Այս ներհակությունը պետք է, որ ունենա իր բացատրությունը, որին էլ քիչ ավելի ուշ կանդրադառնանք:

Իսկ ի՞նչ են արձանագրել ժամանակակիցները: Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը, որ ժամանակով ամենամոտն է կանգնած Հակոբ Դ. Ջուղայեցուն եւ որը եղել է հանգուցյալ Հայրապետի մերձավորագույն ու հոգեհարազատ համախոհը, նրա մահվան առիթով հեղինակել է չափածո մի քանի ստեղծագործություն՝ «Գանձ եւ ողբք ի վերայ Յակոբ Կաթողիկոսի» վերտառությամբ[12]: Այստեղ հեղինակը հստակ փաստել է՝

Ջ ՃԻՌ. Հայոց անցեալ,
եռ մտամբքն հասեալ[13],
յօգոստոս մրտեալ.
Ջանցաւորս թողեալ,
զսուտ կենցաղս լրքեալ.
Մահու հնազանդեալ[14]:

«**Յօգոստոս մրտեալ**»-ը կարող է լինել միմիայն օգոստոսի 1-ը եւ ոչ թե 2-ը: Նույն՝ 1680 թ. գրված հիշատակարաններից մեկն արձանագրում է. «Յակոբ կաթող[ի]կոսն վաղնճեցաւ ի թվականիս Հայոց ՌՃԻԹ. (1680) ամին: Վարդավառին առ Աստուած փոխեցաւ»[15]: Այստեղ շատ էական է «**Վարդավառին**» ցուցումը, քանզի Վարդավառը երբեք չի կարող լինել երկուշաբթի օր, այլ միմիայն կիրակի օրը, այսինքն՝ օգոստոսի 1-ին:

Զաքարիա Ագուլեցին (1630-1691) Կաթողիկոսի մահվան լուրն իմացել է օգոստոսի 27-ին (**իէ**-ում) եւ անմիջապես իր օրագրում արձանագրել. «Թվին ՌՃԻԹ. օգոստոսի **բ**-ում Ըստամբոլ Աստուածածին եկեղեցումն Յակոբ Կաթողիկոսն առ Աստուած փոխեց: Տարան Բէկ-օղլի հանգիստնումն թաղեցին»[16]: Զաքարիա Քանաքեռցին (1627-1699), որ Կ. Պոլիս է այցելել 1684 թ. եւ բավականին տեղեկացված է իրադարձություններին, տարիներ անց՝ 1699 թվականին, իր «Պատմագրութիւն» երկասիրությունը շարադրելիս արձանագրել է. «Մեծն Հայրապետն Յակոբ ... տկարացաւ, եւ վախճանեալ հանգեաւ ի Տէր յայն ամի ի թուին ՌՃԻԹ. յօգոստոսի բ. եւ տարան զնա ի քաղաքն Ղալաթայ՝ ի հասարակաց գերեզմանն ի տեղին՝ որ կոչի Բէկօղլի»[17]: Ժամանակով մերձ Ստեփանոս

11 **Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան**, Ստամպօլոյ պատմութիւն, էջ 603:

12 Տե՛ս **Ն. Ակինեան,** Գանձ եւ ողբք ի վերայ Յակոբ Կաթողիկոսի, «Հանդէս ամսօրեայ», 1933, թ. 9-10, էջ 589-595, հմմտ. նույնի՝ «Երեմիա Չելէպի Քեռմուրճեան. կյանքն ու գրական գործունեութիւնը», Վիեննա, 1933:

13 Ըստ Ն. Ակինյանի՝ Ջ (6) + Ճ (100) + Ի (20) + Ռ (1000) + եռ (3) = է 1229 (1680), տե՛ս **Ն. Ակինյան,** Երեմիա Չելեպի Քեռմուրճեան, էջ 202:

14 Անդ:

15 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Բ., էջ 1406:

16 «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երեւան, 1938, էջ 151:

17 Տե՛ս «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հատ. 2, Վաղարշապատ, 1870, էջ 91:

Հակոբ Դ. Ջուղայեցու դամբարանը մեր օրերում

Հակոբ Դ. Ջուղայեցու շիրմաքարի աջ կողմի ներքեւի անկյան արձանագրությունը



Դամբարանի աջ երեսի արձանագրությունը

Դամբարանի ձախ երեսի արձանագրությունը

Ռոշքան (1670-1739) կաթողիկոսի մահվան օրը չի հիշատակում. «ՌՃԻԹ. Տ. Յակոբ Ջուղայեցի ... վախճանի եւ թաղի ի գերեզմանատանն Պէյօղլի, յորոյ դամբարանէն սակաւ նշանք լինին»[18]: Կաթողիկոսի մահվան օրը չեն հիշատակում նաեւ ԺԸ. դարում ապրած ժամանակագիր Իսահակ վարդապետն[19] ու Սիմեոն Ա. Երեւանցին[20]: Մ. Չամչյանը[21] եւ նրա հետեւությամբ Սարգիս դպիր Սարաֆ Հովհաննիսյանը[22] օգոստոսի 2-ի կողմնակից են: Բնականաբար, սկզբնաղբյուրների տարաձայնությունը չէր կարող իր անդրադարձը չունենալ մասնագիտական գրականության մեջ: Տեսակետները բաժանվել են երկու օգոստոսի 1-ի[23] եւ 2-ի[24] կողմնակիցների միջեւ:

Իրականում խնդիրն ավելի բարդ է, քան մեկ օրվա ճշգրտության հարցը: Իրադարձությունների հստակ պատկերացման համար անհրաժեշտ է հետեւել կաթողիկոսի հիվանդության սրմանն ու մահվանը նախորդող դեպքերի զարգացմանը:

82-ամյա Հակոբ Դ. Ջուղայեցին, որ «**խիթէ կը տառապէր**»[25] (սպամոքսի սուր բորբոքում, խոց - Ա. Ու.), 1680 թ. մայիսին՝ հոգեզալուստից հետո, օդափոխության նպատակով մեկուսացվել է Կ. Պոլսի Սկյուտար արվարձանում: Այստեղ շուրջ երեք ամիս «օր քան զօր տկարացեալ» Հայրապետն այնքան է նվաղում, որ այլեւս անկարող է լինում ինքնուրույն տեղաշարժվել: Հուլիսի 28-ին՝ չորեքշաբթի օրը, մերձիմահ Կաթողիկոսին տեղափոխում են Կ. Պոլիս, որտեղ եւ օգոստոսի 1-ին, կիրակի օրը մահանում է: Ինչպես վերեւում տեսանք, նրա մահը համընկել է Վարդավառին, այսինքն՝ օգոստոսի 1-ի կիրակի օրը: Հուղարկավորությունը տեղի է ունենում հաջորդ օրը՝ երկուշաբթի, օգոստոսի 2-ին: Անկասկած է, որ տապանաքարի վրա զետեղված ընդարձակ արձանագրությունը փաստում է Կաթողիկոսի հուղարկավորության օրը՝ օգոստոսի 2-ը:

Արժեքազուրկ են, դեռ ավելին՝ զավեշտալի, այն պնդումները, թե Կաթողիկոսը **մահվանից տոպեներ առաջ**[26] դավանագիր է ստորագրել, որի համաձայն, իբր հավատել է իր հպատակությունը «ծայրագույն քահանայապետին», այսինքն՝ Հռոմի պա-

18 **Ստեփանոս Ռոշքայ,** Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1984, էջ 184:

19 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», XII-XVIII դդ., հատ. 1, կազմեց Վ. Ա. Հակոբյան Երեւան, 1951, էջ 309:

20 **Սիմէօն Կաթուղիկոս Երեւանցի**, Ջամբռ Վաղարշապատ, 1873, էջ 26:

21 **Մ. Չամչեան,** նշվ. աշխ., հատ. Գ., էջ 719:

22 **Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննիսեան,** Վիպագրութիւն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքին. 1800, Երուսաղէմ, 1967, էջ 71:

23 Տե՛ս «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1904, էջ 269: **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, հատ. Բ., էջ 2615: **Ա. Գ. Հովհաննիսյան,** Դրվագներ..., գիրք 2, էջ 219: **Յակոբ Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, առաջին հատոր (1453-1800), Բէյրութ, 1965, էջ 548 (այլ կապակցությամբ՝ օգոստոսի 2-ին, տե՛ս անդ, էջ 646**): Յ. Քիւրտյան,** Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի, Անթիլիաս, 1965, էջ 39: **Ս. Ճեմճեմեան**, Հայ պատգրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար), Վենետիկ, 1989, էջ 152 եւ այլն:

24 Տե՛ս **Հրանտ Ասատուր**, Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, «Տարեցոյց ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1911, էջ 76, հմմտ. նույնը, Սրանպոլ, 2011, էջ 88: **Մ. Խոսրիկեան,** նշվ. աշխ., էջ 785: **Վ. Թորգոմեան**, նշվ. աշխ., հատ. 2, էջ 605: **Լեո,** Հայոց պատմություն, հատ. 3, գիրք 1, Երեւան, 1969, էջ 339: **Լ. Սրբ. Խաչիկյան**, Աշխատություններ, հատ. Ա., Երեւան, 2012, էջ 425 եւ այլն:

25 Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», երկրորդ հատ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1953, էջ 59ա:

26 «Կը դառանիմ մահուանս ժամէն մի քանի վայրկեան առաջ» (տե՛ս **Ն. Թերզեան**, նշվ. աշխ., էջ 194):

պին[27]: Գարձյալ անլուրջ են կաթողիկոսին իր իսկ մահվան օրը թաղելու եւ նրա հոգեհանգստյան պաշտոնը Կ. Պոլսի կաթոլիկ հովվապետ Գ. Գասպարինիի կողմից կատարելու վերաբերյալ պնդումները[28]: Գեռեւս Մաղաքիա արքեպ. Օրմանյանը եւ Ն. Քյուրտյանը անհերքելի փաստերով ցույց են տվել նման պնդումների արհեստածին, անտրամաբանական ու անհամոզիչ լինելու հանգամանքը, որ այնքան սիրելի էին ու սովորական ժամանակի հայ կաթոլիկական միջավայրում (Թադեոս վրդ. Համազասպյան, Սողոմոն Լեւոնյան, Վարդան Հունանյան, եւ ավելի ուշ ժամանակներում Միքայել վրդ. Չամչյան, Աղեքսանդր վրդ. Պալճյան, Համազասպ վրդ. Ոսկյան, Կարապետ վրդ. Ամատունի եւ այլք): Առանց որեւէ մասնագիտական հատուկ պատրաստվածության, հեշտությամբ ապացուցելի է ինչպես Հակոբ Ջուղայեցուն վերագրվող դավանագրի ձեռագրի, այնպես էլ նրա ստորագրության կեղծ լինելը, որը եւ կատարել է Ն. Քյուրտյանը[29]: Եւ վերջապես, որքա՞ն լուրջ է 82-ամյա մերձիմահ մարդու կողմից նման որեւէ փաստաթուղթ հեղինակելը: Չէ՞ որ նա դա կարող էր անել բազմիցս, երբ դեռ առողջ էր, գիտակից ու գործունյա, եւ երբ, տարբեր առիթներով, թղթակցում էր իր օրերի Հռոմի քահանայապետերի (Աղեքսանդր Է., Կղեմես Ժ., Իննովկենտիոս ԺԲ.) հետ:

Ի դեպ, կաթոլիկ պատմաբանները նաեւ այդ թղթակցությունների հիման վրա է, որ Հակոբ Գ. Ջուղայեցուն ներկայացնում են որպես հռոմեական կաթոլիկ եկեղեցուն համախոհ: Սակայն հստակ է, որ պապերին ուղարկված Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի (նաեւ այլ կաթողիկոսների) համապատասխան գրությունները պետք է դիտարկել որպես քրիստոնեական սիրո եւ հարգանքի արտահայտություններ եւ ոչ թե Հռոմի կղերապետին հնազանդություն հայտնելու հավատարմագրեր:

Եւ վերջինը: Մի՞թե կարող է լուրջ թվալ Կաթողիկոսի մահվան օրն իսկ նրան հուղարկավորելը: Ինչպիսի՜ անհարգալից, անպարկեշտ ու անհասկանալի վերաբերմունք բոլորի կողմից սիրված «Հայոց Մեծն կաթողիկոսի» նկատմամբ: Եւ մի՞թե Կ. Պոլսում այնքան բազմաթիվ հայ հոգեւորականների առկայության պայմաններում հնարավոր էր հանգուցյալի հոգեհանգստյան պաշտոնը վստահել կաթոլիկ հոգեւորականի: Եվ այդ բոլորից հետո Հայոց Առաքելական եկեղեցու մեծագույն նվիրյալ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը ի՞նչ տրամաբանությամբ ու սիրով չորս տաղեր ու հատուկ Գանձ կնվիրեր կաթոլիկություն ընդունած հայրապետի հիշատակին: Չէ որ, հակառակ դեպքում նա կարող էր ընդհանրապես չարձագանքել այդ տխուր իրադարձությանը:

Հակոբ Ջուղայեցու մահվան վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաեւ այդ ժամանակներում Կ. Պոլսի Հիսուսյան օրդենի մեծավոր մոնսինեոր Ֆրանչեսկո Ջոլիին: 1680 թ. սեպտեմբերի 26-ի թվակիր՝ Վատիկան հղված մի նամակում նա գրում է. «13 օգոստոսի, 1680-ին Հայրապետ մեծն Հայոց Հակոբ ... մեռաւ Կ. Պոլսոյ մեջ»[30]: Օրերի տարբերությունը հեշտությամբ է բացատրվում, եթե նկատի ունենանք

27 Տե՛ս «Ապտիք», ամսագիր, Բէյրութ, 1955, թ. 10-12, էջ 145-146, հմմտ. «Յուսաբեր», օրաթերթ, Կահիրե, 1955, 20 սեպտեմբերի:

28 Տե՛ս «Բազմավէպ», 1949, թ 7-9, էջ 72:

29 Տե՛ս **Յ. Քյուրտեան,** Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի, էջ 63-65:

30 **Ն. Քյուրտեան,** Նիւթեր..., էջ 89:

եւրոպական եւ արեւելյան ամսաթվերի 13 օրվա տարբերությունը: Հետեւաբար, եւրոպական օգոստոսի 13 ամսաթիվը հավասար է արեւելյան օգոստոսի 1-ին: Անշուշտ, կաթոլիկ մեծավորն այս դեպքում ավելի ճշմարտապատում է, քան նրա լեկտորատի շատ ներկայացուցիչներ:

Ամփոփենք. Երեմիա Քյումուրճյանը,մոնսինեոր Ֆրանչեսկո Ջոլիին, 1680 թ. Անանուն հիշատակագիրը, որոնց բոլորին միավորում է ժամանակակից ու ականատես լինելու հույժ կարեւոր հանգամանքը, համերաշխ են շիրմաքարի աջ կողմի ներքեւի անկյան արձանագրությանն այն մասին, որ Կաթողիկոսը մահացել է օգոստոսի 1-ին: Մյուսները փաստն արձանագրել են միջնորդավորված՝ կամ լսելով եւ կամ շատ ավելի ուշ շիրմաքարին հայտնված ընդարձակ արձանագրության, որտեղ խոսքը թաղման օրվան է վերաբերում:

Այսպիսով, առկա բոլոր փաստական տվյալները համադրելով կարելի է եզրակացնել, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցին մահացել է 1680 թ. օգոստոսի 1-ի կիրակի օրը, իսկ հուղարկավորվել մեկ օր անց՝ օգոստոսի 2-ին, երկուշաբթի: